Կարգապահական գործ թիվ ԿԳ-15114

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի փետրվարի 09-ի թիվ 19-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/16-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արմինե Հարությունյանին (արտոնագիր թիվ՝ 1041) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

22.06.2015թ. դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝Պալատ) Նարինե Բեգլարյանը հայտնել է, որ թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործով ինքը ներկայացրել է պատասխանող Անահիտ Սարգսյանի շահերը (այսուհետ՝Պատասխանող), իսկ Արմինե Հարությունյանը՝ հայցվոր Վանանդ Արդուշ Անդրեասյան Ազարարգիթիի (այսուհետ՝ Հայցվոր) շահերը:

Թիվ ԵԿԴ-1304/02/15 քաղաքացիական գործով Վանանդ Արդուշ Անդրեասյան Ազարարգիթին դիմել է դատարան ընդդեմ Անահիտ Սարգսյանի, երրորդ անձ՝ Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի՝ երեխայի բնակության վայրը հոր բնակության վայրով որոշելու պահանջով, իսկ Անահիտ Սարգսյանը հակընդդեմ հայց է ներկայացրել ընդդեմ Վանանդ Արդուշ Անդրեասյան Ազարարգիթի, երրորդ անձ՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի, Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի՝ երեխայի խնամքը մորը հանձնելու՝ բնակության վայրը մոր բնակության վայրով սահմանելու պահանջով:

Նարինե Բեգլարյանը հայտնել է, որ Երեխան ապրում և ապրել է իր վստահորդի՝ Արմինե Սարգսյանի հետ:

Դիմումով Նարինե Բեգլարյանը հայտնել է նաև, որ Արմինե Հարությունյանը Հայցվորի և Պատասխանողի երեխայի տեսակցությունը կազմակերպելու նպատակով անմիջականորեն կապ է հաստատել Պատասխանողի հետ, քանի որ Արմինե Հարությունյանը մի քանի անգամ ներկա է գտնվել երեխայի տեսակցություններին՝ փոխանակելով անմիջական տեղեկություններ իր վստահորդի հետ:

Արմինե Հարությունյանն իր բացատրությամբ հայտնել է, որ իր վստահորդի հանձնարարությամբ մասնակցել է երեխայի տեսակցություններին, ինչին Պատասխանողը չի առարկել:

Ըստ Դիմողի՝ փաստաբանը պետք է հրաժարվեր անմիջական շփման մեջ մտնել իր վստահորդի հետ՝ տեղյակ լինելով, որ վերջինս ունի փաստաբան: Դիմողի կարծիքով տեղի ունեցածով Պատասխանողը խախտել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետը:

Դիմողն այդ կապակցությամբ խնդրել հարուցել կարգապահական վարույթ փաստաբան՝ Արմինե Հարությունյանի նկատմամբ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

22.07.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 240-Ա/ԿԳ-15114 որոշմամբ՝ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արմինե Հարությունյանի նկատմամբ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետերի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 11.09.2015թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Մարիամ Ղուլյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Ա. Հարությունյանը տեսակցությունները կազմակերպելու նպատակով տեսակցության օրը կամ դրանից մեկ օր առաջ ուղիղ կապի է դուրս եկել իր վստահորդի (վերջին հեռախոսազանգը եղել է հունիսի 15-ին) հետ, անմիջական տեղեկություններ է փոխանակել իր վստահորդի հետ: Վերջինս նրան զգուշացրել է, որ փաստաբան Ա. Հարությունյանն իրավունք չունի անմիջապես իր հետ կապի մեջ դուրս գալ, ինչին ի պատասխան փաստաբանը հեգնանքով ասել է հետևյալը. *<u>աղջիկ ջան, ես ոչ մի իրավունք, ոչ մի օրենք, ոչ մի էթիկայի կանոն չեմ խախտում</u>*: Դիմողը ներկայացրել է նաև իրենց խոսակցության ձայնագրությունը:

Միաժամանակ հայտնել է, որ իր վստահորդի հետ անմիջական կապի մեջ մտնելուց, ոչ առաջ և ոչ էլ հետո, փաստաբան Արմինե Հարությունյանը նախապես չի տեղեկացրել Անահիտ Սարգսյանի փաստաբաններին՝ իրենց վստահորդի հետ հանդիպումներ ունենալու մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Արմինե Հարությունյանը բացատրություն է տվել, որ իր կարծիքով դիմումն անհիմն է, և, որ իր արարքում առերևույթ առկա չէ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3 կետի խախտում, բացակայում են նաև կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը և առիթը որի կապակցությամբ ներկայացրել է հետևյալ հիմնավորումները.
Այսպես, Արմինե Հարությունյանը նշել է, որ 2015թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում, իր վստահորդի և Անահիտ Սարգսյանի փոխադարձ համաձայնությամբ, իր վստահորդի հետ մի քանի անգամ այցելել է Անահիտ Սարգսյանի հոր արվեստանոց, որտեղ ներկա է գտնվել անչափահաս Արեգ Ազարարգիթիի հետ իր վստահորդի տեսակցություններին: 2015թ. հունիսին իր վստահորդի հանձնարարությամբ, զանգահարել է Դիմողի վստահորդին՝ երեխայի տեսակցության ժամը ճշտելու նպատակով: Արմինե Հարությունյանը հայտնել է նաև, որ անչափահասի տեսակցությունների ընթացքում Պատասխանող կողմի հետ գործի կամ այդ գործին առնչվող խնդրի հետ կապված որևէ հաղորդակցություն իր և Անահիտ Սարգսյանի միջև տեղի չի ունեցել, այսինքն՝ թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործի կամ այդ գործին առնչվող խնդրի վերաբերյալ իր կողմից անմիջական տեղեկություն չի փոխանակվել Անահիտ Սարգսյանին: Պատասխանողը նշել է նաև, որ ձայնագրությունը ձեռք է բերվել առանց իր թույլատրության, օրենքի խախտումով, ուստի և չի կարող օգտագործվել որպես ապացույց:

Արմինե Հարությունյանը հայտնել է նաև, որ անչափահասի տեսակցությունների ընթացքում Պատասխանող կողմի հետ զրուցել է ընդամենը երեխայի առողջական վիճակի, երեխայի ուտելու, քնելու, նաև՝ իրենց ընտանիքը վերականգնելու հեռանկարների մասին, ինչը նաև կատարվել է նախկինում Դիմողի վստահորդների փաստաբանների հետ:

3.3. Վկաների ցուցմունքները

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին

Թիվ ԿԳ240-Ա/ԿԳ-15114 կարգապահական գործը նախապատրաստող՝ Մարիամ Ղուլյանը 28.09.2015թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը նախապատրաստելու ընթացքում գործում առկա ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում վերջինս փաստել է, որ սույն կարգապահական գործը հարուցվել է Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 5.3 ենթակետի խախտման հատկանիշներով, որի համաձայն՝ ***Փաստաբանը չպետք է որևէ դատական գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ, եթե այդ կողմին ներկայացնում է մեկ այլ փաստաբան՝ առանց այդ փաստաբանի համաձայնության (ավելին, վերջինս պետք է տեղեկացված լինի նման հաղորդակցության մասին), բացառությամբ այն դեպքի, երբ***

հակառակորդ կողմն ինքն է նախաձեռնել հանդիպումը կամ այդ գործընթացի ժամանակ հակառակորդ կողմի փաստաբանը ներկա չէ:

Գործը նախապատրաստողը փորձել է պարզել սույն կարգապահական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ հարցերը.

-արդյո՞ք փաստաբանը անմիջական տեղեկություն է փոխանակել հակառակորդ կողմի հետ,

-արդյոք հակառակորդ կողմն ունի փաստաբան,

-արդյոք փոխանակված տեղեկությունը կապված է դատական գործի կամ խնդրի հետ,

-արդյոք առկա եղել է հակառակորդ կողմի փաստաբանի համաձայնությունը,

- արդյոք չի գործում որպես բացառություն սահմանված պայմանը:

Ուսումնասիրելով կարգապահական գործի շրջանակում ներկայացված նյութերը, նախապատրաստողը եզրակացրել է, որ Պատասխանողի արարքում բացակայում են Կանոնագրքի 5.3 կետի խախտման հատկանիշներ:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

05.10.2015թ. սույն կարգապահական գործը և նախապատրաստողի եզրակացությունը հանձնվել է պալատի Խորհրդին:

Սույն կարգապահական գործը վարույթ ընդունելու և նիստ նշանակելու մասին 08.10.2015թ. որոշմամբ այն վարույթ է ընդունվել:

Խորհրդի նիստը նշանակվել է 2015թ. նոյեմբերի 18-ին ժամը 18:30-ին, որը սակայն տեղի չի ունեցել և հետաձգվել է:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 24.11.2015թ. ժամը 18:30-ին, 14.12.2015թ. ժամը 18:30-ին և 09.02.2016թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի»22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Թիվ ԵԿԴ-1304/02/15 քաղաքացիական գործով Վանանդ Արդուշ Անդրեասյան Ազարարգիթին դիմել է դատարան ընդդեմ Անահիտ Սարգսյանի, երրորդ անձ՝ Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի՝ երեխայի բնակության վայրը հոր բնակության վայրով որոշելու պահանջով, իսկ Անահիտ Սարգսյանը հակընդդեմ հայց է ներկայացրել ընդդեմ Վանանդ Արդուշ Անդրեասյան Ազարարգիթի, երրորդ անձ՝ Երևան քաղաքի

Աջափնյակ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի, Կենտրոն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի՝ երեխայի խնամքը մորը հանձնելու՝ բնակության վայրը մոր բնակության վայրով սահմանելու պահանջով:

- Թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործով պատասխանող Անահիտ Սարգսյանի շահերը ներկայացրել է փաստաբան Նարինե Բեգլարյանը, իսկ հայցվոր Վանանդ Արդուշ Անդրեասյան Ազարարգիթիի շահերը՝ փաստաբան Արմինե Հարությունյանը:
- Փաստաբան Արմինե Հարությունյանն, իր վստահորդի և վերջինիս անչափահաս երեխայի, հերթական տեսակցության օրվա և ժամը պարզելու համար, հեռախոսազրույց է ունեցել Հայցվորի հետ: Հերթական տեսակցությունը տեղի է ունցել Անահիտ Սարգսյանի հոր արվեստանոցում, որին ներկա է գտնվել նաև Արմինե Հարությունյանը: Պատասխանողի և Դիմողի վստահորդի միջև երեխայի վերաբերյալ խոսակցություն է տեղի ունցել, որի ընթացքում քննարկվել է երեխայի մազերի և քաշի հետ կապված հարցեր:

Նշված փաստերը հաստատվում են կողմերի բացատրություններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 23.11.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն փաստաբան Արմինե Հարությունյանի (արտոնագիր թիվ 1041, տրված՝ 16.10.2010թ.) նկատմամբ 2010-2015թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմինե Հարությունյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 5.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը չպետք է որևէ դատական գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ, եթե այդ կողմին ներկայացնում է մեկ այլ փաստաբան՝ առանց այդ փաստաբանի համաձայնության (ավելին, վերջինս պետք է տեղեկացված լինի նման հաղորդակցության մասին), բացառությամբ այն դեպքի, երբ հակառակորդ կողմն ինքն է նախաձեռնել հանդիպումը կամ այդ գործընթացի ժամանակ հակառակորդ կողմի փաստաբանը ներկա չէ*:

Պալատի նախագահի 22.07.2015թ. որոշմամբ արձանագրվել է, որ Կանոնագրքի 5.3 ենթակետն ունի պարզաբանման կարիք, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնի նպատակը - Կանոնի հիմնական նպատակը փաստաբանների շահերը պաշտպանելն է և փաստաբաների դերի ու նշանակության բարձրացումը:

Կանոնի երկրորդական նպատակը վստահորդին պաշտպանելն է մյուս կողմի փաստաբանի գործողություններից, հաշվի առնելով այն, որ իրավագիտակցության ոչ այդքան բարձր մակարդակ ունեցող վստահորդը կարող է խոցելի լինել առանց իր փաստաբանի մասնակցության:

Շփում հասկացությունը - Այս կանոնը նպատակ չի հետապնդում առհասարակ բացառել փաստաբանի շփումը հակառակորդ կողմի հետ, ինչը նաև քաղաքավարության տարրական կանոնների մեջ չի ներառվում: Օրինակ, եթե դատական նիստին կողմը եկել է ավելի շուտ, քան իր փաստաբանը, ապա դա դեռ չի նշանակում, որ հակառակորդ կողմի փաստաբանն իրավունք չունի ողջունելու կողմին կամ հարցնելու վերջինս ինչպես է իրեն զգում:

«Խնդիր» եզրույթի մեկնաբանությունը - Կանոնագրքի 5.3 ենթակետը սահմանում է, որ փաստաբանը չպետք է որևէ գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ.... այս նախադասության մեջ «խնդիր» բառը ակնկալվում է, որ ի սկզբանե ունեցել է «իրավական բնույթի խնդիր» իմաստը, քանի որ հակառակ պարագայում փաստաբանը և հակառակորդ կողմի վստահորդը անգամ եղանակից կամ մեքենայի կայանման վայրից խոսելու դեպքում անմիջական տեղեկություն կփոխանակեն որևէ խնդրի վերաբերյալ:

Պալատի խորհուրդը կարևորելով բարձրացված իրավական հարցադրումները ներկայացնում է հետևյալ դիրքորոշումը՝

ա) Կանոնագրքի 5.3 ենթակետով նախատեսված վարքագծի կանոնի (**այսուհետ՝ Կանոն**) **հիմնական նպատակը** փաստաբանների շահերը պաշտպանելն է և փաստաբանների դերի ու նշանակության բարձրացումը:

Հետևաբար, այս կանոնին հետևելով, փաստաբանը չպետք է շրջանցի մյուս կողմի փաստաբանին և ուղղակի նրա վստահորդի հետ հարաբերություններ հաստատելով չպետք է նվազեցնի մյուս փաստաբանի դերը:

Յուրաքանչյուր գործով Կանոնագրքի 5.3 ենթակետի խախտման հարցը դիտարկելիս, խորհուրդը պետք է հաշվի առնի այդ գործի փաստերը:

բ) Կանոնագրքի 5.3 ենթակետում նշված տեղեկության **անմիջական փոխանակումը** հակառակորդ կողմի փաստաբանի հետ հնարավոր է **միայն բանավոր հաղորդակցության** միջոցով:

գ) Կանոնագրքի 5.3 ենթակետում նշված դատական գործը կամ խնդիրը Պալատի խորհուրդը մեկնաբանում է դրանց բառացի նշանակությամբ: Կանոնում նշված խնդիր ասելով պետք է հասկանալ դատական գործին վերաբերող կամ չվերաբերող ցանկացած իրավական խոհրդատվություն պահանջող հարց:

Սույն գործի փաստերից Պալատի խորհուրդը եզրահանգում է, որ փաստաբան Արմինե Հարությունյանը փաստաբան Նարինե Բեգլարյանի վստահորդին զանգահարելով նպատակ է հետապնդել լուծել կազմակերպչական բնույթի հարցեր:

Հատկանշական է, որ երեխայի տեսակցության հարցով հակառակորդ կողմի հետ պայմանավորվածությունն ինքնին չի կարող հանդիսանալ Կանոնագրքի 5.3 կետի խախտում: Փաստաբան Նարինե Բեգլարյանի վստահորդը լրիվ հնարավորություն ուներ իր

փաստաբանին տեղեկացնել հանդիպման օրվա և ժամի մասին և նրա ներկայությունը ապահովեր:

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի և իր վստահորդի դատավարական հակառակորդի միջև անմիջական շփում տեղի ունեցել է, սակայն կարգապահական վարույթով կողմերի տրված բացատրություններից հաստատվել է այն հանգամանքը, որ փաստաբանի և վերջինիս վստահորդի հակառակորդի միջև քննարկվել են, ոչ թե թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործի, այսինքն՝ ոչ թե դատական գործի կամ խնդրի հետ կապված տեղեկություն պարունակող հարցեր, այլ քննարկվել են երեխայի տեսակցության օրվա և ժամի վերաբերյալ հարցեր, և(կամ) երեխայի մազերի և քաշի հետ կապված հարցեր: Չնայած այն հանգամանքին, որ կողմերն ընդունել են այն փաստը, որ Արմինե Հարությունյանը զրույց է վարել, և անմիջական շփում է ունեցել Անահիտ Սարգսյանի հետ, սակայն, տվյալ դեպքում այդպես էլ չի հիմնավորվել այն հանգամանքը, որ Արմինե Հարությունյանը թիվ ԵԿԴ/1304/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում դատական գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն է փոխանակել իր վստահորդի հակառակորդ կողմի հետ:

Պատասխանողի կողմից վերոնշյալ խախտումները թույլ տալու փաստը վկայակոչել և ներկայացրել է Դիմողը: Համաձայն Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 15-րդ հոդվածի 1-ին մասի, առ այն, որ «Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը», ապացուցելու պարտականությունը կրում է փաստը վկայակոչած Դիմողը: Եվ համաձայն «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 15-րդ հոդվածի 5-րդ մասի ՝ «Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը», տվյալ դեպքում Դիմողը:

Սույն կարգապահական գործի քննության ընթացքում Խորհրդին չի ներկայացվել կամ չեն ներկայացվել այնպիսի թույլատրելի և վերաբերելի ապացույց, որով հաստատված կհամարեր փաստաբան Արմինե Հարությունյանի կողմից Կանոնագրքի 5.3 կետի խախտում թույլ տալու փաստը:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7 հոդվածի 5-րդ մասի՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությունից հետո պալատի խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը կարգապահական վարույթը կարճելու մասին:*

Իսկ համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 2-րդ մասի՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:*

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ

«Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 22.07.2015թ. թիվ թիվ 240-Ա/ԿԳ-15114 որոշմամբ փաստաբան Արմինե Հարությունյանի (արտոնագիր թիվ 1041) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.3. կետի պահանջների խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան